ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՈՐՈՇՈՒՄ

«12» փետրվարի 2015թ. N 54-Ն

ք.Ստեփանակերտ

## ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՎՈՂ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՀԱՄԱՐ ԾԱԽՍՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի մասնակի սուբսիդավորման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2015 թվականի փետրվարի 12-ի
N 54 -Ն որոշման

# ԿԱՐԳ
# ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՎՈՂ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՀԱՄԱՐ ԾԱԽՍՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի մասնակի սուբսիդավորմանն ուղղված միջոցառումների իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) ***մեխանիկական ոռոգման համակարգ***՝ արտեզյան ջրհորներ, պոմպակայաններ, ջրանցքներ, խողովակաշարեր՝ ճանապարհներով, շենքերով, էլեկտրահաղորդման գծերով և այլ ենթակառուցվածքներով (այսուհետ՝ արտեզյան ջրհոր).

2) ***ոռոգման ջուր***՝ գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման համար նախատեսված և ոռոգման ջրի ստանդարտներին համապատասխանող ջուր.

3) ***ջրամատակարար***՝ ջրառ իրականացնող, ջուրն ամբարող և (կամ) ջրօգտագործողներին մատակարարող անձ.

4) ***շահագործող***՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը հանդիսանում է սահմանված կարգով ջրամատակարարի և ջրօգտագործողների հետ ջրօգտագործման պայմանագիր կնքած և մեխանիկական եղանակով ոռոգում իրականացնող անձ.

5) ***ջրօգտագործող (հետագայում՝ բաժանորդ)***՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը սահմանված կարգով հանդիսանում է շահագործողի հետ ջրօգտագործման պայմանագիր կնքած անձ և հանդիսանում է ոռոգման ջուր սպառող վերջին օղակը.

6) ***տեխնիկական պայմաններ***՝ մեխանիկական ոռոգման համակարգին միանալու, սպառված ջուրը հաշվառելու, ոռոգման համակարգի հետագա անվտանգ և հուսալի շահագործումն ու ջրամատակարարումն ապահովելու նպատակով ջրամատակարարի կողմից առաջադրվող պայմաններ.

7) ***ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի մասնակի սուբսիդավորում***՝ մեխանիկական եղանակով մատակարարվող ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի մասնակի սուբսիդավորում.

8) ***ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի մասնակի սուբսիդավորման միջոցառման մասնակից***՝ մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի մասնակի սուբսիդավորմանն ուղղված միջոցառումների իրականացման գործընթացում ներգրավված պետական և տարածքային կառավարման մարմինները:

## II. ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի մասնակի սուբսիդավորմանն ուղղված միջոցառումների իրականացման գործընթացում ներգրավված պետական և տարածքային կառավարման մարմիններն իրականացնում են հետևյալ միջոցառումները՝
   1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համապատասխան շրջանի վարչակազմի ներկայացուցիչը.
   ա. մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի մասնակի սուբսիդավորման գործընթացի ապահովման համար գույքագրում է շրջանում գործող արտեզյան ջրհորները՝ նշելով համայնքը, տեղանքը, շահագործողին, պոմպի հզորությունը, ինչպես նաև դրանց տակ մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի տարածքների մակերեսը,
   բ. շահագործողների կողմից ներկայացված սույն կարգի 7-րդ կետում նշված ակտերն ամփոփում և սույն կարգի 9-րդ կետի համաձայն ամփոփ տեղեկություն է ներկայացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն (այսուհետ՝ նախարարություն).
   2) նախարարությունը վերահսկողություն է իրականացնում մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի մասնակի սուբսիդավորմանն ուղղված միջոցառումների իրականացման գործընթացի նկատմամբ:
4. Մեխանիկական եղանակով իրականացվող գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգում իրականացնելու ցանկություն ունեցող հողօգտագործողներն ոռոգման ջրի հայտեր են ներկայացնում շահագործողին՝ համաձայն N 1 հավելվածի:
5. Բաժանորդների կողմից ներկայացված հայտերի հիման վրա շահագործողը ոռոգման ջրի մատակարարման պայմանագրեր է կնքում նրանց հետ՝ համաձայն N 2 հավելվածի:
6. Մատակարարված ջրի ծավալի դիմաց վճարման ենթակա գումարը հաշվարկվում է համաձայն տեխնիկական պայմանների արտեզյան ջրհորներին կից ենթակայանների վրա տեղադրված էլեկտրաէներգիայի քանակը հաշվառող սարքերի միջոցով ըստ գործող սակագների:
7. Շահագործողը և բաժանորդը կամ նրանց ներկայացուցիչները, մինչև հաջորդ ամսվա 7-ը, հիմք ընդունելով ներկայացված ոռոգման ջրի հայտերը և կնքված ոռոգման ջրի մատակարարման պայմանագրերը, յուրաքանչյուր ամիս կատարում են շահագործողի կողմից իրականացված ջրառի, ինչպես նաև յուրաքանչյուր բաժանորդին մատակարարված ջրի ծավալի, դրա դիմաց վճարման ենթակա գումարի չափերի գրառում ոռոգման ջրի հանձնման-ընդունման ակտում (այսուհետ՝ ակտ) համաձայն N 3 հավելվածի:
8. Սույն կարգի 7-րդ կետում նշված ակտը շահագործողի կողմից մինչև տվյալ ամսվա 10-ը ներկայացվում է համապատասխան շրջանի վարչակազմ:
9. Համապատասխան շրջանի վարչակազմի ղեկավարը մինչև տվյալ ամսվա 15-ը ամփոփ տեղեկություններ է ներկայացնում նախարարություն՝ համաձայն N 4 հավելվածի:

10. Մեխանիկական ոռոգման համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի մասնակի սուբսիդավորման համար հիմք են հանդիսանում սույն կարգի 9-րդ կետում նշված՝ նախարարություն ներկայացված տեղեկությունները:
11. Ոռոգման ջրի ծավալը որոշվում է գյուղատնտեսական մշակաբույսերի համար հաստատված ջրման ու ոռոգման նորմերի հիման վրա՝ համաձայն N 5 հավելվածի:
12. Սուբսիդավորման ենթակա է արտեզյան ջրհորից մատակարարվող 1 խորանարդ մետր ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի և ինքնահոս եղանակով ոռոգման 1 խորանարդ մետր ջրի սակագնի տարբերությունը:
13. Գյուղատնտեսական մշակաբույսերի համար հաստատված ջրման ու ոռոգման նորմերից ավել ծախսված էլեկտրաէներգիայի արժեքը սուբսիդավորման ենթակա չէ:
14. Սուբսիդավորումը կատարվում է հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից սահմանված ինքնահոս եղանակով ոռոգման ջրի մատակարարման ծառայության մատուցման սակագինը:
15. Նախարարությունը, սույն կարգի 9-րդ կետում նշված տեղեկությունները ստանալուց հետո մինչև տվյալ ամսվա 20-ը ընդհանրացնում և դրանց հիման վրա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն է ներկայացնում համապատասխան հայտ:
16. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը՝ սույն կարգի 15-րդ կետում նշված հայտը ստանալուց հետո, մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի մասնակի սուբսիդավորման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված միջոցներից սահմանված կարգով հատկացնում է համապատասխան ֆինանսական միջոցներ:
17. Նախարարությունը, ֆինանսական միջոցները ստանալուց հետո դրանք տրամադրում է շահագործողին՝ սույն կարգի 12-րդ կետում նշված, բաժանորդի կողմից մեխանիկական ոռոգման համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի մասնակի սուբսիդավորման համար:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1
Մեխանիկական եղանակով
մատակարարվող ոռոգման ջրի համար
ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի
մասնակի սուբսիդավորման կարգի

# ՀԱՅՏ
# ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ

______________________________
(բաժանորդի ծածկագիրը)

1.
____________________________________________________________
(բաժանորդի Ա.Ա.Հ., անվանումը, հեռախոսահամարը)

2.
____________________________________________________________
(հասցեն)

3.
____________________________________________________________
(տնօրենի Ա.Ա.Հ., հեռախոսահամարը)

4.
____________________________________________________________
(անձնագրային տվյալները, եթե իրավաբանական անձ է՝ պետական ռեգիստրում գրանցման
ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և ծածկագիրը)

5.
____________________________________________________________
(սեփականության կամ վարձակալության իրավունքը հաստատող փաստաթղթի տվյալները)

6.
____________________________________________________________
(ջրառ կատարելու տեղանքը, ծավալը)

7.
____________________________________________________________
(մեխանիկական եղանակով ոռոգվող տեղանքը)

8.
____________________________________________________________
(ոռոգվող գյուղատնտեսական մշակաբույսերի ցանկը)

____________________
________________________________________________

(ստորագրությունը) (բաժանորդի Ա.Ա.Հ., անվանումը)
Կ.Տ. Կ.Տ.

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 2
Մեխանիկական եղանակով
մատակարարվող ոռոգման ջրի համար
ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի
մասնակի սուբսիդավորման կարգի

*Ձև*

# ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N_____
# ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

քաղ. (գ.) ____________________ ______ ____________________ 20 թ.

_____________________________________________________________,
այսուհետ՝
(շահագործողի ԱԱՀ, անվանումը)
Շահագործող, մի կողմից և
_______________________________________________________
(բաժանորդի ԱԱՀ, անվանումը)
այսուհետ՝ Բաժանորդ, մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

## I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Շահագործողը Բաժանորդին, համաձայն ներկայացրած ոռոգման ջրի հայտի (այսուհետ՝ Հայտ), մատակարարում է ոռոգման ջուր, որի մեկ խ.մ. համար որպես հաշվարկային միավոր ընդունվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից սահմանված սակագինը, իսկ բաժանորդը սույն Պայմանագրին համապատասխան ընդունում է ոռոգման ջուրը, օգտագործում այն և հաշվարկված ջրի վարձը վճարում Շահագործողին՝ սույն Պայմանագրի 4.1. կետում սահմանված կարգով:
1.2. Հայտը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մաս:
1.3. Կողմերի միջև հարաբերությունները կարգավորվում են օրենքով և սույն Պայմանագրով:

## II. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Մատակարարված ոռոգման ջուրը դիտարկվում, չափվում է, ամիսը մեկ անգամ գրառվում է ոռոգման ջրի հանձնման-ընդունման ակտում (այսուհետ՝ Ակտ):
2.2. Դիտարկման օր է՝ յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 1-ը, կողմերի կողմից պայմանավորված ժամերին: Սահմանված ժամին (0,5 ժամվա ընթացքում) կողմերից որևէ մեկի ներկայացուցչի չներկայանալու դեպքում հիմք է ընդունվում ներկայացած կողմի գրառումը:

## III. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Շահագործողը պարտավորվում է՝**

ա) Հայտի առկայության դեպքում Բաժանորդին մատակարարել ոռոգման ջուր.

բ) համաձայն Բաժանորդի նոր (լրացուցիչ) Հայտի պակասեցնել հին Հայտով նախատեսված ոռոգման ջրի ծավալը, իսկ Հայտով նախատեսվածից պակաս տրված (իր մեղքով թերմատակարարված) ջրի ծավալը լրացնել հաջորդ 3 (երեք) օրվա ընթացքում.

գ) սույն Պայմանագրով նշված կարգով լրացնել և ստորագրել Ակտի երեք օրինակները.

դ) ոռոգման ջրի մատակարարումը սահմանափակելու կամ դադարեցնելու մասին անմիջապես տեղեկացնել Բաժանորդին:

**3.2. Շահագործողն իրավունք ունի՝**

ա) սույն Պայմանագրով նշված կարգով և սահմանված ժամկետներում վճարումները չկատարելու դեպքում, սահմանված կարգով 3 (երեք) օր առաջ զգուշացնելուց հետո, դադարեցնել Բաժանորդի ջրամատակարարումը՝ մինչև պարտքի մարումը.

բ) Հայտով նշված ծավալով ոռոգման ջրի մատակարարումից հետո Բաժանորդին ոռոգման ջուր մատակարարել նրա՝ հետ կնքված նոր (լրացուցիչ) Պայմանագրի հիման վրա՝ մինչև այդ մատակարարված ոռոգման ջրի վճարումները Բաժանորդի կողմից ամբողջությամբ կատարվելու դեպքում՝ Շահագործողի տնօրինման ներքո գտնվող համակարգի տեխնիկական հնարավորության սահմաններում.

**3.3. Բաժանորդը պարտավորվում է՝**

ա) սույն Պայմանագրով սահմանված կարգով ստանալ ոռոգման ջուրը.

բ) սույն Պայմանագրով նախատեսված ջրաքանակի ստացման, դրանից հրաժարվելու կամ այն նվազեցնելու մասին 3 (երեք) օր առաջ նոր (լրացուցիչ) Հայտ ներկայացնել Շահագործողին.

գ) սույն Պայմանագրով նշված կարգով լրացնել և ստորագրել Ակտի երեք օրինակները.

դ) վճարել նախորդ ամսվա ընթացքում մատակարարված ոռոգման ջրի վարձը՝ Ակտը ստորագրելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում.

ե) ջրամատակարարման խախտման մասին անհապաղ տեղեկացնել Շահագործողին:

**3.4. Բաժանորդն իրավունք ունի՝**

ա) ջրաչափական դիտակետերում ստուգիչ չափումների անհրաժեշտության դեպքում մասնակցել այդ չափումներին.

բ) Հայտով նշված ծավալով ոռոգման ջրի մատակարարումից հետո Շահագործողի հետ կնքել նոր (լրացուցիչ) Պայմանագիր՝ մինչև այդ մատակարարված ոռոգման ջրի՝ վճարումները ամբողջությամբ կատարելու դեպքում՝ Շահագործողի տնօրինման ներքո գտնվող համակարգի տեխնիկական հնարավորության սահմաններում:

## IV. ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ

4.1. Մատակարարված ոռոգման ջրի դիմաց Բաժանորդի կողմից վճարումները կատարվում են Ակտում գրառված, յուրաքանչյուր ամիս փաստացի մատակարարված ոռոգման ջրի ծավալին համապատասխան Ակտը ստորագրելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում:

## V. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1. Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Անհամաձայնության դեպքում վեճերը լուծվում է դատական կարգով:

5.2. Սույն Պայմանագրից բխող և սույն Պայմանագրով չկարգավորված մյուս բոլոր հարցերը կարգավորվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## VI. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրումից հետո և գործում է 1 (մեկ) տարի ժամկետով:

6.2. Սույն Պայմանագրի ժամկետը լրանալուց հետո այն կարող է երկարաձգվել ևս 1 (մեկ) տարով կամ կնքվել նոր Պայմանագիր:

6.3. Շահագործողն ու Բաժանորդը միևնույն անձը հանդիսանալու դեպքում պայմանագիր չի կնքվում:

6.4. Հայտը կազմված է 2 (երկու) հավասարազոր օրինակից՝ Շահագործողի և Բաժանորդի համար:

6.5. Սույն Պայմանագիրը կազմված է 2 (երկու) հավասարազոր օրինակից՝ Շահագործողի և Բաժանորդի համար:

6.6. Ակտը կազմված է 3 (երեք) հավասարազոր օրինակից՝ Շահագործողի, Բաժանորդի և շրջանի վարչակազմի համար:

## VII. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| **Շահագործող** | **Բաժանորդ** |
|---|---|
| ______________________________ | |
| ______________________________ | |
| ______________________________ | |
| ______________________________ | |
| ______________________________ | |
| ______________________________ | |
| ______________________________ | |
| ______________________________ | |
| ______________________________ | |
| ______________________________ | |
| (ստորագրությունը)<br>Կ.Տ. | (ստորագրությունը)<br>Կ.Տ. |

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 3
Մեխանիկական եղանակով
մատակարարվող ոռոգման ջրի համար
ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի
մասնակի սուբսիդավորման կարգի

# ԱԿՏ
# ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

______________ ամսվա համար, _____ ________________ 20 թ.

| *Հ/հ* | *Բաժանորդի անունը, ազգանունը, հայրանունը, անվանումը* | *Համայնքը, պետական պահուստային ֆոնդը, Մեխանիկական եղանակով ոռոգվող տեղանքը* | *Ոռոգվող գյուղատնտեսական մշակաբույսերի ցանկը* | *Ոռոգվող հողատարածքը ընդամենը (հա)* | *Մեկ ամսում Մատակարարված ջրի ծավալը (խմ.)* | *Ջրի արժեքը (ՀՀ դրամ)* | *Բաժանորդի ստորագրությունը* |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | | | |
| 2 | | | | | | | |
| 3 | | | | | | | |
| 4 | | | | | | | |
| 5 | | | | | | | |

**Շահագործող**

________________________________

________________________________

________________________________

________________________________

________________________________
(ստորագրություններ)
Կ. Տ.

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 4
Մեխանիկական եղանակով
մատակարարվող ոռոգման ջրի համար
ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի
մասնակի սուբսիդավորման կարգի

# ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

## ԼՂՀ ____________________ ՇՐՋԱՆ

| *Հ/հ* | *Համայնքը, պետական պահուստային ֆոնդը,* | *Մեխանիկական եղանակով ոռոգվող տեղանքը* | *Շահագործողի անունը, ազգանունը, հայրանունը, անվանումը* | *Պոմպի հզորությունը (կՎտ)* | ***1** խմ ջրի վրա ծախսված էլեկտրաէներգիա (կՎտ)* | *Ոռոգվող հողատարածքը ընդամենը (հա)* | *այդ թվում՝* | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | *աշն. հացահատիկ* | *եգիպտացորեն* | *արևածաղիկ* | *կարտոֆիլ* | *ծխախոտ* | *բանջար-բոստանային* | *խաղողայգի* | *պտղատու այգի* |
| 1 | | | | | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | | | | | |
| 4 | | | | | | | | | | | | | | |
| 5 | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | |

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 5
Մեխանիկական եղանակով
մատակարարվող ոռոգման ջրի համար
ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի
մասնակի սուբսիդավորման կարգի

# ՆՈՐՄԵՐ
# ԼՂՀ ՀԱՐԹԱՎԱՅՐԱՅԻՆ ԳՈՏՈՒ ՇԱԳԱՆԱԿԱԳՈՒՅՆ, ՄԻՋԻՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ, ՄԻՋԱԿ ԿԱՎԱ-ԱՎԱԶԱՅԻՆ ԵՎ ԱՎԱԶԱ-ԿԱՎԱՅԻՆ ՀՈՂԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՋՐՄԱՆ ՈՒ ՈՌՈԳՄԱՆ

*Ծովի մակարդակից մինչև 500 մետր բարձրություն*

| *Հ/հ* | *Մշակաբույսը* | *Ջրումների քանակը* | *Ջրման նորմը $մ^3$/հա* | *Ոռոգման նորմը $մ^3$/հա* |
|---|---|---|---|---|
| **1** | Աշնանացան ցորեն | 4 | 850 | 3400 |
| **2** | Եգիպտացորեն | 4 | 750 | 3000 |
| **3** | Արևածաղիկ | 5 | 700 | 3500 |
| **4** | Կարտոֆիլ (վաղահաս) | 5 | 650 | 3250 |
| **5** | Ծխախոտ | 12 | 650 | 7800 |
| **6** | Բանջարաբոստանային | 16 | 500 | 8000 |
| **7** | Առվույտ | 7 | 900 | 6300 |
| **8** | Խաղողի այգի | 5 | 1100 | 5500 |
| **9** | Պտղատու այգի | 5 | 1000 | 5000 |

*Ծովի մակարդակից 500 -900 մետր բարձրություն*

| *Հ/հ* | *Մշակաբույսը* | *Ջրումների քանակը* | *Ջրման նորմը $մ^3$/հա* | *Ոռոգման նորմը $մ^3$/հա* |
|---|---|---|---|---|
| **1** | Աշնանացան ցորեն | 3 | 850 | 2550 |
| **2** | Եգիպտացորեն | 3 | 750 | 2250 |
| **3** | Արևածաղիկ | 4 | 700 | 2800 |
| **4** | Կարտոֆիլ (վաղահաս) | 4 | 600 | 2400 |
| **5** | Ծխախոտ | 10 | 600 | 6000 |
| **6** | Բանջարաբոստանային | 12 | 450 | 5400 |
| **7** | Առվույտ | 5 | 900 | 4500 |
| **8** | Խաղողի այգի | 4 | 1100 | 4400 |
| **9** | Պտղատու այգի | 4 | 1000 | 4000 |

*Ծովի մակարդակից 900 մետրից բարձր*

| *Հ/հ* | *Մշակաբույսը* | *Ջրումների քանակը* | *Ջրման նորմը $մ^3$/հա* | *Ոռոգման նորմը $մ^3$/հա* |
|---|---|---|---|---|
| **1** | Աշնանացան ցորեն | 2 | 800 | 1600 |
| **2** | Եգիպտացորեն | 3 | 700 | 2100 |
| **3** | Արևածաղիկ | 3 | 700 | 2100 |
| **4** | Կարտոֆիլ (վաղահաս) | 4 | 550 | 2200 |
| **5** | Ծխախոտ | 6 | 550 | 3300 |
| **6** | Բանջարաբոստանային | 8 | 450 | 3600 |
| **7** | Առվույտ | 4 | 800 | 3200 |
| **8** | Խաղողի այգի | - | - | - |
| **9** | Պտղատու այգի | 3 | 1000 | 3000 |

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ